



ԳՐԱԿԱՆ . — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . — ՊԱՏՄԱԿԱՆ .
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1896 ՀԱՏՈՐ ԵՒ ՏՈՒԼԻՍ

Պ Ա Տ Կ Ե Ր Ո Ւ Ս Ո Յ Յ Գ Ի Ր Ք



Ա. ՅՍՊԵՍ կ'անուանեմք առ ժամս՝ մինչև յարմարագոյն անուն մի պատշաճի, Չեռագիր՝ մանաւանդ թէ Չեռանկար գրքի մի, որոյ նմանը մինչև հիմայ չեմք տեսած կամ լըսած, և փափագիրմք՝ որ եթէ ծանօթ է ընթերցողաց կամ նմանն ունողաց, հաճին ծանուցանել ի գիտութիւն բանասիրաց և ի գովեստ մեր նախնեաց. որք՝ ոչ միայն գեղեցիկ գրերով և գոյներով, և աւելի կամ պակաս վայելուչ նկարներով և զարդերով շատ ու շատ ձեռաց վաստակ թողեր են մեզ յետնոցս՝ յայլեւայլ գրեանս, այլ և, ինչպէս գրչութեան ուսում և վարդապետութիւն աւանդեր են, այսպէս երեւի թէ և Պատկերագրութեան կամ Նկարչութեան և Զարգացրութեան ուսում և օրինակ կամ գաղափար (modèle) աւանդած են, ամբողջ գիրք մի ձեռացընելով զարգուց և պատկերաց, թէ գունաւոր և թէ անգոյն։ Ասոր հաւաստիք է հիմայ մեր տեսած Չեռագիրքն՝ (ըստ սովորական կոչման անսովա գրոց), բայց սա հազիր քանի մի թուղթ գրուած ունի, թուրս են զարգանել և մանաւանդ պատկերք, ըստ

մեծի մասին նմանօրինակք ժԴ—ԺԶ ձեռագրաց մէջ եղածներուն. նոր գրողաց և նկարչաց օրինակ տալու համար հնարուած, որպէս գուշակուի՝ տեսութեամբ։ Պուշակուի, կ'ըսեմք, վասն զի գիրքն՝ իր նպատակին կամ հեղինակին դիտման հասած ըլլալով, (իրեն համար՝ յաջողութեամբ, իսկ մեզ՝ անյաջողութեամբ), այնքան գործածուած է որ հինգեր և շատ մաշեր է, մանաւանդ եզերքներն. և չեմք գիտեր՝ որքան թուղթ կամ մագաղաթ հանուեր կորեր են. վասն զի, ոչ սկիզբն կամ յառաջաբանն ունի, ոչ վերջաբան կամ յիշատակարան, և ոչ անուն. թէ սկիզբն և թէ վերջն պակասած է։

Փոքրաշափ գիրք մ'է, իբր 0,18 Չ. երկայն, 0,14 լայն. բովանդակ մնացեալն է 59 թուղթ, յորոց 25ն մագաղաթ, 34 բամբակեայ։ Հնութեան կամ տարիքին մէկ հաւաստի յիշատակ մի կայ, յորմէ տոուգութ ժԶ գարու սկզբում կամ ի վերջ ժեյն նրկարագրուած ըլլալ. այս յիշատակն է մանրագիր առղիկ մի ի ներքեւ 75դ երեսին, « ՋՄԹ. թվ. Սիրունի լանն նախատակեցաւ

ի մարերիի Իձ սուրբ Խաչի աթոռքի, Հինգ» : Չեւ գրոցն համեմատ է թուականին, և շատ նման գիմացի երեսին գրուած տառերուն. ուրով գուշակութի՝ թէ գրողն զայն գրելու աւտեն՝ լսեր է այդ Սիրունի յաճին նահատաւ կուծիւնը, յամի 1511, յունիսի 5 կամ 6, ըսյց Ս. Խաչի արտաք ինչ է, և իր հինգ թիւն, կ'ուզեմք ի հմտագունից տեղեկանալ. և թէ Յայմատուրաց մէջ գտուի այդ նահաւ տակութեան յիշատակն՝ գիւրանայ այս խնդրոյ. ըսյց նախ փափաքելու է գտնել զայն Յայմատուրք, թիւրեւ ի կողմնաւ Վանայ՝ ուր որ թուի գիրքն գրուած : — Գրոց 11դ երեսում՝ երկու երկայնաձեւ զարդուց միջոց այս գրուածն այլ կայ. « Աստուած ողորմի Յուսէփին, ամէն » : Միթէ այդ նահատաւ կուշ լսեն է Յուսէփդ թէ ուրիշ մէկ մի : Այս երկու յիշատակներէն զատ ուրիշ չկայ. ըսյց կան քանի մի գրուածք այլ, կարճ կամ երկայն :

Կարճ գրուածներն՝ բուն գրոց նիւթին և նպատակին վերաբերին, թէ և շատ քիչ տողք են, այլ գուշակել տան՝ թէ տառի կամ եւտեն՝ երկարորէն գրուած և վարդապետութիւն կար՝ նկարչութեան արուեստին, թէ՛ տառից և զարդուց պատկերաց ձեւերու նկատմամբ, և թէ նկարուց զոյներու բաղադրուածութեանց :

Այս կարճ և քանի մի տող գրուածոց մէկն է յերես 15, զարդաձեւից և պատկերի մի միջոց համատարաբար. « Յաւալ Լազուարդն, » Կանաչն, Լալ, Կարմիր, Ճնարակ. Այս » չորս գեղս՝ Ոսկոյ աստաւ է, (այսինքն » տակ կամ յատակ, fond). քանի Չանդուֆ » ըրն շատ աղայս (կամ ատայս) հան, որ » քարն ի քարն չկաննի, որ գզոյն չաւե » բէ. լաւ է » : Այս գրուածն հին է, ըսյց թիւրեւ ոչ որքան վերոյգրեալ յիշատակաւունքն : Աւելի նոր երեսի գրոց վերջին (118) երեսին վարի դի գրուածն, ներկուց և աւանց տակերու անուններ, կամ « Խորատը գե » ղոց. Լաժվարդի աստաւի երեսուցք, » Վարդ. Ալին Լուք. Չընդուֆը՝ Բեհեգ. » Կանաչն... ակ. Մաղաղեղին (մաղաղէ) » Բեհեգ. Լըզով չէ՞ Զինուն Կանաչ. Ճը » Ինթակին՝ Զընդուֆ կամ Սիլիկուն... ա » դեղին Աւխրա (Oere) գիր՝ կարմրով նը » շանէ... նկարէ յետոյ բացուաղքէ. Զինու » բացու(աջ) Սիլիկակ » : — Գրոցս 110դ երեսն Քրիստոսի Խաչիւթութեան զուսուկոյ պատկեր է. (որպիստե՞ս յիշուի յետոյ). անոր և իր Մօր միջոց կարմրով գրուած է. « ՉԱստուածածնի հանդերձին զմէկն՝ ծի » բանի արաւ հանապաղ » : Գեղեցիկ խրատ. այս պատկերին մէջ այլ Տիրամօր բուն հան

դերձն կարմրագոյն է : — Ուրիշ տեղ մի (եւրես 33) օտար՝ ըսյց հինկեկ գրով, (եղերքն մաշուած), գրուած է « մի ? Ժիպակ. մի... Բ » խաւնի... ձեռն գիր որ չորնայ... դիր, » բիւթակ, ու դիր ի քո... սրի... յինում » Ղլայեկ. մի. (ի վե(րայ) լից ու խան(հանէ) » ու լվայ... ի վե(րայ) Սի (սիլիկուն ?) գրէ » : Սոյն երեսում կան սեւագիծ պատկերք Աւետարանաց Մատթէոսի և Մարկոսի, երկուքին վերու այլ գրուած անուններն և չափադր. Մարկոսի գեղատուց վրայ այլ տեղ տեղ գրուած է. Կանաչ. շ. բմ. ՄԲ. լուս. Ուրիշ շատ պատկերաց վրայ այլ գրուած են անուանք և աստիճանք ներկոց կամ գունոց. Ինչպէս, Բաց (գոյն). Խորու. Բաց Միրանի. Բաց Խորու. և այլն. հնդ մ'այլ (երես 5), « Ամիր » աշխարհն՝ զարմանալի լուք է » : — Այս քան փոքրիկ նշանակք այլ բուսական ցոյց կու տան ներկոց բաղադրութեան հմտութեան, և անոնց անուանց ու դրից. Ինչպէս են Աստաւն, Բացուաղքն, Երեսուցք, և այլն : Բնագիր կամ թարգմանած ձեւագրաց մէջ գտուին աւելի երկայն խրատը այս աւրուեստիս :

Կարճ գրուածոց մէկ մ'այլ է (յերես 31), օտար բան, և օտար՝ այլ հին գրչաւ, Հարսին ու փեսայի օրհնէնք մի. ըսյց տողից կէս մասն շատ ջնջուած, թէ և ենթակայն մագաղաթ է. « Աստուածէն աւրչնութեամբն » աւրչնէ գէս (այս) Թագուհիս ու զթագաւ » ւորս, զինչ աւրչնեց զերեք Թագաւորքն ու » երեք ի յարն Բեթղէհէմ. յերկարագու » թիւն կուսած(ին) Աստուածածնին, որ » տեսին... ու զմանուկն Քրիստոս ի խանա » բուրս պատեալ ի մուրն անբանից : Աս » տուած աւրչնէ գէս Թագուհիս զինչ աւրչ » նեց զԱսաւ... ետուր զՄահակ յամուլ » յարգանդէ... Թագաւորն Քրիստոս աւրչ » նէ զթագաւորս ու զթագուհիս և զժողո » վուրդս... : Այսպիսի մ'եւ կայ ջնջգիր : Ի ըսյց Թողով երես մ'այլ (69) Հմա » յական կամ պաշտպանակի գրուած, որոյ մեծ մասն չորս աւետարանաց առաջին տ » դերն է, երկար կուսած գրուածքն են, Ա, չորս երես (70-3) Խրատական բանք, որ Ոսկեփորկայց մէջ գտուին, և թիկարի կամ ծանօթ անուն հեղինակի մի կ'ընծայուին, և քանի մի տողով տուն տուն բաժնուած են, նոյնք և նմանք Սիրաքայ և Սողոմոնի Առա » կաց. ամենքն այլ՝ Որդեակ կոչմամբ սկսուած. Ինչպէս. « Որդեակ, ի լեզուէ քումէ երկիցես, » որպէս յօտար թշնամույ, գի ոչ դիտես » յորում ժամու ածէ ի վերայ քո չարիս » : Բ. Կիրակոս կաթողիկոսի կոնդակն, ըստ Թովմայի Մեծօրհնեցւոյ, (տ. Պամ. Հայ, Գ,

487), վասն արձակման ի բանագրութեանց՝ Աղթամարայ և Աղուանից կաթողիկոսաց և այլոց, (44-6 երեսք). — Գ. « իմաստասիրի վէճ ընդ գինի բարբառխաւս » , այսինքն Բարդուխս, (53-4 երես), որ թղթին վերջին տողին հասած՝ պակաս մնայ, և ասով այլ վկայուի գրոց այլ և այլ թղթոց կորսուիլն. գրուածն ութտետն չափով է, և՝ իմաստասէրն ասէ, Դինին ասէ, կրկնելով՝ արամաբանութիւն կամ գրուցարութիւն է, գինւոյ փնասու և օգտի վրայ. — Դ. Երես 74-5, աւելի նշանաւոր և ոտանաւոր գրուած մի է բարդական, Աղամայ և Եւայի դժբաղդութեան, և Քրիստոսի ծննդեամբ աշխարհի փրկագործութեան

վրայօք լեզուն մաս մի հայերէն, աւելի մասն խառնափնոր մի, պարսիկ, թուրք թերեւ և ջուրդ: Այս ետքի երկու գրուածքը յետոյ հրատարակեմք, յիշեցնելով՝ որ ասոնց թղթոց եզերքն այլ մաշած կամ պակսած են, մանաւանդ երկրորդն, որ հանդերձ գրերու փոքրկութեան, և խտութեան և համառոտութեան՝ դժուարացրեն զկարդալն, ինչպէս լեզուն այլ՝ զհասկանալն: — Այս ամէն գրուածքն միանգամայն՝ 12 երես գրաւեն. քանի մ'այլ կէս կամ ամբողջ պարապ թողուածքն այլ համբելով, մնան ոչ պակաս քան զհարիւր երեսք պատկերաց, որք մեր բուն քննելիքն են:



Թիւ 1.



Թիւ 2.



Թիւ 3.



Թիւ 4.



Թիւ 5.



Թիւ 7.



Թիւ 6.

Պատկերքն գրեթէ բոլոր մէկ՝ գրչի կամ մէկ ժամանակի գործ կ'երեւին, միայն քանի մի երես կամ երեսի մի պարապ տեղ՝ յետին գրիչ մտեր է. յետնագոյն ճարտող գրիչ այլ կայ, որ և ոչ յիշելու կ'արժէ: Պատկերաց և զարդուց մեծագոյն մասն գծաձեւ են (linéaire), ընդհանրապէս բաց կարմիր գունով, քիչ անգամ և կապոյտ: Կան և գունաւորեալ պատկերք ոչ սակաւ, այլ ոմանք շատ նուաղեալ. ոսկի և փայլուն երանգ չկայ քնաւ: Առարկայք պատկերաց՝ շատն հին և նոր կտակարանաց անձինք և Ս. Հարք ներկայացընեն, մասն մի և Քրիստոսի տօբեանութեանց և Աւետարանի պատմական դիպաց. մեծ մասն սովորական կըրնայ ըստիլ, նախայիշեալ դարուց աւետարանաց կամ Աւ-

տուածաշունչ գրոց մէջ գտուածներուն նման. որոց համեմատ է և ճարտարութիւն նկարուցն: Փառելին քանի մի անսովոր կամ հագուադիւտ պատկերք եւս նախահարց կամ այլ անձանց, մէկ երկու այլ բոլորովին այլ լակերպք կամ հրէշակերպք. մէկն (եր. 59) գունաւորած վայրի մարդ գրուած, կնճթաւոր, աղետոր և եղբրաւոր, զոր ներկայացընեմք անգոյն. միւսն (եր. 23) շատ ճարտար ձեւացուցած հրէշ քառոտանի մի է, գլուխն մարդու դէմքով, այլ բովանդակ մարմնոյն մասունքն այլ և այլ չորգոտանեօք, թռչնովք և ձկամք, տեղ տեղ և մարդկային կերպարանօք բաղադրեալ, ինչպէս պիտի տեսնեն ընթերցողք, արեւելեան աւանդութեան և ճարտարութեան հնարք թուի սա:

Ինչպէս՝ վարպետը գրրի և նկարու արււնետը սովորեցընելու համար՝ պարզ ձեւերէ կու սկսին, այսպէս այլ մեր հեղինակն կամ պատկերագիրն, իր հաւաքման առաջին ութ

կամ տասն երեսաց մէջ միայն զարդեր նկարած է, այնպիսիք՝ որ սովորաբար ձեւագիր, նա և հին տպագիր Մարմոսաց կանոնաց և Շարականաց եղբրքում կու տեսնուին. աւ



Թիւ 8.



Թիւ 9.

ւելի քան 50 այսպիսի զանազան երկայնաւնի կամ ուղղահայեաց դժաձեւք կան, 30 մ'այլ հորիզոնական դիրքով. մէկ քանիին

վրայ միայն հազիւ կ'երեւին կերպարանք, ինչպէս կէտ ձկան՝ Յովնան ի բերանի. շատերուն վերի ծայրն խաշով մի կ'աւարտի,



Թիւ 10.



Թիւ 11.

ամանց այլ պոչին կամ ուրիշ մասին վրայ փոքր տառար մի կայ, և ամանց վարի կողմն ծալապատիկ դառնուկ մի:

Նշանաւոր է (եր. 12) կարմրագիծ բարակ զարդ մի, որոյ վարի լայն մասին մէջ՝ փոքր՝ բայց լայն հաւասարամասն խաչաձեւ

մի կայ, երկու գին պատած զոյգ մի թըռչնովք կտուց կըտցի, որոյ վրայ նրբագիծ ուղղակի թռչելու ձեւով աղանձի մի թւաբաց՝ այլ գլխիվայր՝ իբր Ս. Հոգի, որ կըտցով բռնէ վերին մասը, որ է սկիհ մի խաշանիչ նշխարաւ ի վրայն:

Յետ զարդաձեւից՝ պատկերագիրն ուզեր է վարժեցընել զարդագործիւ, այսինքն զարդերով գիրեր ձեւացընել, թէ պարզ գծերով և թէ օղակաձեւ կամ աղուցիկ, շատ հեղ թռչնովք բաղադրեալ, քիչ հեղ ձկամբ: Ասոնց օրինակ ըլլան մեր թիւքն 1—6. երկու ձ, երկու ն, երկու ւ տառք. 7 թիւ մանչիկն այլ ներկայացընէ Փ գիրը: — Այս երկու իբր տարրական ձեւանկարներէն զատ՝ գրոց այլ և այլ իջից մէջ, բայց աւելի սկիզբն երում՝ կան քանի մի կանոնաւոր ձեւով զարդք և քանի մ'այլ քմահաճոյք և հնարագիտականք. առաջիններուն կրննայ զազափար մի ըլլալ բոլորակն թիւ 8. երկրորդ տեսակին միւս մեծ բոլորակն, թ. 9, երեք շանց կամ

զազանաց, զիրար խաժատելով: Երբեմն թւաւորաց և լուղակաց այլ այսպիսի իրարանցումն նկարեն ձեւագիրք, և երբեմն այլ զանազան մարմնոց մէկ գլուխ մի յարմարցընեն, ինչպէս այդ երեք ձկանցն, թիւ 10: Երբ՝ միջին երբեմն և հին և նոր ձեւագրաց ծանօթք՝ շատ հեղ կու տեսնեն անոնց մէջ, մանաւանդ ի ճակատս զարդանկարուց՝ կնուագէմ թռչուններ, որ հին առասպելեաց և հաւատոց շողորդք են, և շատ ազգաց յիշատակարանաց մէջ այլ գտուին. այսպիսի է մեր պատկերագրոց մէջ ընծայելոց մէկն, թ. 11. կան քանի մի հատ եւս աւելի սուր նայուածքով թռչնուհիք: Ուրիշ ասոնց նման կամ աննման՝ բնական կամ անբնական զարդերն ու նկարները՝ պիտի յիշենք ուր որ հանդիպին, և ինչ կարգաւ որ ցուցընէ գրոց հիմակուան հաւաքումն, որ թուի այլայլած և պակաս ձեղինակին կարգածէն:

Շարառայելի

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

(Տես յ'էջ 200)



Միջոց վենետիկն պէտք է նորէն անցնինք ի Զուղա, ուր արվեն մեր րնթիւնը թեցողաց ծանօթ տպարանէն վերջին երկու հրատարակութիւնք կ'ըլլան ի 1687 և ի 1688, և կը լռէ այնուհետեւ հայկական մամուլ՝ մինչև մեր օրերուն նոր կեանք մը ստանալը: Այս կրկին հրատարակութիւնք են, առաջինն՝ Աղեքսանդր վարդապետի Զուղայեցւոյ, յետոյ կաթողիկոսի, զիբք մը հետեւեալ խորագրով. « Գիրք որ ասի Վիճաքանական, ներտպագրեցեալ ի տպարանում սրբոյ Ամենափրկչի վանացս Նոր Զուղայոս. ի հայրապետութեան տեառն Եղիազարու... և յառաջորդութեան այսմ նահանգի

տեառն Ստեփանոսի յայտածողի զտպարարութեան և հրամայողի ասնել զգիրս: Աշխատասիրութեամբ օւսմէն նուազող՝ տէր Աղեքսանդրի ծառայի բանի, ի թուականութեան Հայոց ՌՃԼԶ »: Թէ՛ն Տ իբրու յառաջաբան « Առքրիառասէր և յազգապաւան ժողովուրդոց հայկական՝ ի Քրիստոսի նուազող ծառայ Աղեքսանդր պիտականուն վարդապետէ յայտարարութիւն »: Զունի ժամանաւոր յիշատակարան բայց հետեւեալ սողերը.

Ինձ ողորմեա, տէր Էմ Յիսուս, Աստուած և Բան, Աղեքսանդրի քո ծառայիս որ պարտական, Որ Էմ նշուատ սակաւ բանից որ ասացան. Զխաչելեցես յաւուր մեծի քո զալըստեան.